Յես կհեռանամ, բայց մտքերն իմ վառ կմնան  
համետ։

Յեվ իսկապես Սարիրին անհնար և մոռանալ։

Այսոր մեր յերկրում, սոցիալիզմի լիակատար  
հաղթանակի եպոխայում, մենք ավելի յենք հիշում  
Սարիրին և ավելի ջերմորեն սիրում նրան։

# ՍԱԲԻՐԻ

## ԲԱՆԱՏԵՂՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



# ԲԵՅՆԵԼՄԻԼԵԼ\*)

ՀԱՅ ՅԵՎ, ԹՈՒՐՔ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՍ

ՅԵՐՐ մեր դարը պահանջում եւ յեղբայրություն սըր-  
քազան,

ՅԵՐՐ բոլորս ցանկանում ենք մի խաղաղ կյանք ան-  
բաժան,

ՅԵՐՐ մեր հոգում բնավ չկա վոչ մի պատճառ  
զժոտության,

Զամակները մեր այս յերկրի լի յեն քենով մի դա-  
ժան, —

Հայի, թուրքի որտերի մեջ սերմ են ցանել չարու-  
թյան,

Մի՞թե չկան հերոս մարտիկ՝ դաշինք կարգեն միու-  
թյան :

Ո՛ դիտումներ, հանդե՛ս յեկեք, այսոր — ո՛քն եւ վեհ  
կոչչի,

Լինենք յեղբա՛յր մենք մտերիմ, թշնամանքը թող  
կորչի :

ՅԵՐՋՈՒ դրմից, յերկու ընկեր սիրալու միշտ բախ-  
տակլից,

Զամակները հենց նույն հողի՝ սաղել են հաշտ,  
սրասակից,

\* ) ԲԵՅՆԵԼՄԻԼԵԼ — ինտերնացիոնալ:

Դարձեր ամսվերջ յեղել կրտար մտութիմ ու կարձեկից,  
Այսոր հանկարծ արյուն մըսթեց խաղաղ յերկնից ու  
Վշանքից,

Տգիտության ու չեցիտանի մասն և այսուեղ խառնա-  
կիչ,

Գյուղ ու քաղաք յեղան ավեր, ամբ' իմ, վրկիր չա-  
րեցից:

Ո՛ գիտուններ, հանդե՛ս յեկեք, այսորորն և վեհ  
կոչի,

Լինենք յեղբ ա՛յր մենք մտերիմ, թշնամանքը թող  
կորչի:

Ո՞վ աերթանեց այսքան չարիք և ո՞վ նյութեց այս-  
քան դաշի,

Զեմ հաւանում, թե ի՞նչ հողմ եր, վոր մեր շուրջը  
բարձրացավ,

Չի՛ կարելի հավատա՛ւ, թե մարդու ձեռքով սա ան-  
ցավ,

Հայ ու թօւրքի գործ չե՛ յերեք, նրանք պատճառ  
չեն բնալ

Յեմ նախճիրը, վոր կա հիմա, տղիտությամբ այդ  
յեղանի,

Թշնամությունն այս քերում և ժողովուրդին դարդ  
ու ցավ:

Ո՛ գիտուններ, հանդե՛ս յեկեք, այսորո՛րն և վեհ  
կոչի,

Լինենք յեղբայր մենք մտերիմ, թշնամանքը թող  
կորչի:

1        2

Ծշմարտություն պիտ քարոզել ժողովրդին կեղծքված,  
Բացել աշքերն ու դուրս բերել նրան կյանքից այս  
ճնշված,  
Արևի պես միշտ շողջողալ, ցըել խավարն  
անթափանց,  
Յեմ հուշերից հայինտ վանել չարությունը ահազնած :  
Բեյներմիքեն, ու գու Սաբիր, ինչըսայրության թահ  
արած,  
Աշխատիր միշտ հերու կենալ այս աշխարհից խռ-  
պարած :

Թարգ. ՎԱՐՍԵՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

---

# ՔԵԶ ԻՆՍԱՆ ԵՍ ԻՄԱՆՈՒՄ

Ֆաւլուս, դժու եղ աշխանքհումու քեզ ինսան ես  
իմանում,  
Անփող դյաղա, մարդ լինելը հանաք բան ես  
իմանում:

Մարդը, ախր, վտառք ու պատիվ, ապրելու հայ  
կունենա,  
Մարդը առատ հարստություն, դովվաթ ու մալ  
կունենա,  
Դեյրաթն ի՞նչ ա՝ մարդը տներ ու սիրուն զայ  
կունենա:

Եդ մութ ու նամ քո խրճիթը առպարանք ես իմանում,  
Աղա, ախմախ, մարդ լինելը դու հանաք ես  
իմանում:

Ի՞նչ ունես դու մեծիսումը—քո խոսքը դիմի աղար ա,  
Մեծերի մոտ դու վտափ կաց, ձեն մի հանի, տագ  
արա,  
Աղքատ մարդ ես՝ գնա բանիսէ, խելքը գլխիդ սազ  
արա,

Անհող դուլին հարուստի հետ մի բանակ ես  
խմանո՞ւմ,  
Աղա, ախմախ, մարդ լինելը դու հանաք ես  
խմանո՞ւմ:

Ո՞վ ա տավել քեզ իրավունք հարուստի հետ հավասար,  
Այ անամոթ, չես խմանո՞ւմ, վոր կա մեր մեջ ձոր ու  
սար,  
Փող վոր չունես՝ ով կասի թե դու ել մարդ ես, մի  
ինսան.

Անկարելին ելի ծաղըր ու ծանակ ես խմանո՞ւմ,  
Աղա, ախմախ, մարդ լինելը դու հանաք ես  
խմանո՞ւմ,

Գնա խփիր դու քո մուրճը ու քո դռվան խմացի,  
Չեռք քաշիր եղ քո մտքերից, թևկուզ սով ա՝  
դիմացիր,  
Թահըսն ի՞նչ ա հարուստի մոտ — մի տես ով ա  
դիմացիդ.

Մի արասի որավարձու քյուր թուման ես խմանո՞ւմ,  
Աղա, ախմախ, մարդ լինելը հանաք բան ես  
խմանո՞ւմ:

Հարուստ մարդը միշտ Փահպայի վախտի տերն ա,  
խմացի,  
Փողավորը ես աշխարհի բախտի տերն ա, խմացի,  
Մեծավոք ա, իշխանության թախտի տերն ա,  
խմացի:

Թե այսմը խանություն ա՝ քեզ ել խան ես իման՞ում ,  
Աղա , ախմախ , մարդ լինելը հանաք բան ես  
իման՞ում ,

Համ ապրում եք մեր դովյաթով՝ մեր ես բաղ ու  
գոստանում ,  
Համ ել մեր դեմ կռիվ սարքում , շեյթանի հետ  
գոստանում ,  
Մեր լավության փոխարենը , յարաք , ե՞ս եք  
իտուտանում :

Բարությունը ուրանալը պատվական ես իման՞ում ,  
Աղա , ախմախ , մարդ լինելը հանաք բան ես  
իման՞ում :

Գոնե մի տես քաշվում ես ,  
Կամ բեղարում , մաշվում ես ,  
Փառք այլահին , լավ ա դեռ  
Կըակի մեջ խաշվում ես :

Թարգմ . ՍԱՄՎԵԼ

# ԲԱԳՎԻ ՖԱՀԱՆԵՐԻՆ

Բախտի անիվը թարս եւ պատվում հիմքի,  
Թահլան ել իրեն մեծ մարդ եւ հաշվում հիմքի:

Վո՞նց կլինի դար, որենքի նստի Փահլան,  
Մալ չունի ու գովլաթ չունի հարստի Փահլան,  
Ինչո՞ւ պիտի աղառովի ու ազդի Փահլան,  
Ի՞նչ իրավունք ունի կոռայի, սպատի Փահլան,  
  
Թահլա, ասա, հոգուտ մեռնեմ, ինչու քեզ հարդանք  
լինի,  
Ինչո՞ւ համար, ի՞նչ պատճառով խոսքը ուժեղ, թանկ  
լինի,  
Լուռ ծառայիր հարդաստներին, նբանց յերկար կյանք  
լինի,  
Գոհ յեղի՛ր, ինչ քեզ առն, թեկուզ մի քարթուն  
վշրանք լինի:

Բախտի անիվը թարս եւ պատվում հիմքի,  
Թահլան ել իրեն մեծ մարդ եւ հաշվում հիմքի:

Հարուստ, դզուշ յեղիր, իզուր քեզ խաթի մեջ չդժեռ,  
Թահլի խոսքը արդար լինի—ելի նրան չլաես,  
Ճամբար մի տուր չունչ քաշելու քյասիբներին աևերես,  
Ամեն մի հարվանի խաթըու, մի կեղադատիր ինքը քեզ:

Բախտի անիվը թագա և պտտվում հիմի,  
Ֆահլան ել իրեն մեծ մարդ ե հաշվում հիմի:

Դու չխարսվես, աղքատ մարդուն խելք ու չնորք չի  
լինի,  
Վորովհետեւ որինավոր հազուատ քեզ պես նա չունի,  
Կայք չունի ու դովլաթ չունի, աբա չունի զառ  
գույնի,

Ունի-չունի մի հին չուխա, մի հատիկ կարպետ ունի:  
Բախտի անիվը թագա և պտտվում հիմի,  
Ֆահլան ել իրեն մեծ մարդ ե հաշվում հիմի:

Թե ուզում ես լինել անդարդ, լինել հանգիստ  
աշխարհում,

Չընկնել իզուր գիրկը վշտի ու տանջանքի՝  
աշխարհում,

Դու մի նայեր Փահպի դիմքին ու ունդին՝  
աշխարհում,

Դու քո մասին միշտ մտածիր ու քո կյանքի՝  
աշխարհում:

Բախտի անիվը թագա և պտտվում հիմի,  
Ֆահլան ել իրեն մեծ մարդ ե հաշվում հիմի:

Տես քո ազգի ցավեցը, բայց դու ինքը դեղ մի  
փնտուիր,

Վորորի ու տկարի համար ապաստան, տեղ մի  
փնտուիր,

Ամենելին դու չշինես բարեգործության տուն, շենք,  
Ազգիդ խեղճին դու չհիշես, չանես նըա սիրու շեն:

Բախտի անիվը թագա և պտտվում հիմի,  
Ֆահլան ել իրեն մեծ մարդ ե հաշվում հիմի:  
Թարգմ. ԳՐԱՆԻ

# Ա. Ք Ի Ն Զ Ի

Ել մի զցի ձենդ յերկինք, աղա, աքինչի,  
Աղվեսի տեղ քեզ մի դնիր, գյաղա, աքինչի:

Ամեն որ մի պատրվակով ի՞նչ ես մաշում իմ դուռը;  
Վիզդ ծոսած աղտօստում ես ձմեռ-աշուն իմ դուռը,  
ի՞նչ ես զալիս գլխիդ տալով, լալով քաշում իմ  
դուռը.

Շաշ մի լինի, պատիվ պահիր, աղաք, աքինչի,  
Ձենդ մրտրի, մի մնացատա, աղա, աքինչի:

Թե քեզ համար սեվով անցավ ամբողջ տարին—  
իմ ինչ գործ,  
Յերաշտ յեղավ ու չբուսավ վոչ մի գարի—  
իմ ինչ գործ,  
Կոխին արավ քո բրնձի արտերն արին—իմ ինչ գործ.

Ինձ ինչ թե քո գործը յեղավ բաղա, աքինչի:  
Իզուր-տեղից մի մնացատա, աղա, աքինչի:

Ունեցածդ կարկուտը սեվ սրբեց տարավ—ինչ անեմ,  
Թե մորեխը քո բոստանը ավեր արավ—ինչ անեմ,  
Պարտքատերը թե քո մանկան վերմակն առավ —  
ինչ անեմ.

Շախիր պերջին կտալասդ ել, աղաս, աքինչի,  
Զենդ կտրիր, դիմիո մի դառ զարդ, աքինչի:

Ինձ ինչ թե դու չարչարմում ես, շատ աշխատում,  
Քիչ ուստիմ,  
Զահանդամը թե մեռնում ես դու անոթի ու անտուն,  
Քո աչքերի լույսից թեկուզ ցորեն հանիր բեր ինձ  
տուր:

Զալթուկ ել բեր, ցորեն, գարի, հայրա, աքինչի,  
Թե չե կաշիդ յես կմաշկեմ, աղաս, աքինչի:

Դանի կուզե՞ս ասա չունեմ, կյանքիդ գնով կստանամ,  
Լացակումած աչքերը քո յես հանելով կստանամ,  
Վոսկորներդ ու մարմինդ ջուր անելով կստանամ.

Դո ճարը տես, թե բանդ վաստ ա, աքինչի,  
Խզուր տեղից մի սննդատա, աղաս, աքինչի:

Դեղջուկ մարդ ես, ցորենն ինձ տուր, դու կոչտ քարն  
ել կլափիես,  
Սոված մնաս ճմեռն ամբողջ, ձյունի սարն ել կլափիես,  
Քարից կակուղ թե բան չեղամ զահրումարն ել  
կլափիես:

Դո բանը չեն միս ու փլամ, աղաս աքինչի,  
Ծնառունից ինչո՞վ ես լամ, դյագդա, աքինչի:

Խոկ իմ դիրքը, իմ պատիսլը հնուց անմահ որենք ա,  
Բեղդաղաղա յեմ, հանդիսու կյանքը միշտ ինձ համար  
որենք ա,  
Առանց գինու յես չեմ ճաշի, դա Հո թամամ որենք ա.

Բեղդաղայի հալն եսպես ա, աղաս, աքինչի,  
Լավ իմացի, կարդը ես ա, հարդա, աքինչի:

Թարգմ. ԱԱՄՎԵԼ

---

# ՀԱՄԲԵՐԻՐ

Թշվառության գերկը ընկար, հաշտըմիր, ովլ  
անողնակա՞ն, համբերի՛ր,  
Քաղցած ընտանիքիդ առաջ յերեսդ սևանա անդամ,  
համբերի՛ր:

Աղքատության գերին դարձար, վողորմելի՛,  
խոնացական դու յեղի՛ր,  
Մի՛ աշխատիր, վորմե գործի մի՛ դնա, անզործ,  
անբան դու յեղի՛ր,  
Գժրախտության չարա չկա, լա՛ց, աչքէ թա՛ց,  
արցունքաքամ դու յեղիր,  
Միշտ հե՛զ յեղիր, միշտ գո՞հ յեղիր, ասել ե թե միշտ  
մուսուլման դու յեղիր:

Քո բաժին բերքացը կզարու ամարա ման յեկ,  
անբա՞ն, համբերի՛ր,  
Թշվառության գերկը ընկար, հաշտըմիր, ովլ  
անողնակա՞ն, համբերի՛ր:

Կացությունդ ծանր լինի—հաշտըմիր դու ցավերիդ  
հետ, ովլ անկա՞ր,  
Անհոգ յեղիր, անոգ յեղիր, յեղիր անհույս ու  
ծուլության սիրահար,  
Ճակատակիր համարիր ա՛յդ, ապըիր այդպիս միշտ  
խայտառակ ու տկար,  
Ոդում օթոչող մարդուն յերբեք մի նայիր դու  
կարոտով վառ ու անմար:

Թո՞ղ, մի՛ ջանա, վոր մի՛ դատիր, մի՛ կպչիր  
գործիդ սեփական, համբերի՛ր,  
թշվառության գիրկը ընկար, հաշտըլիր ով  
անողնակա'ն, համբերի՛ր :

Թե զուլում գա բոնակալից, բեգից, խանից,—  
վերուստ տրված համարիր,  
թե վոր տերդ գա հարկ ուղի, դա յերկնքից  
քեզ սահմանված համարիր,  
թեյեվ ինքդ ևս քո խեղճության պատճառը միշտ՝  
ճակտիդ գրված համարիր,  
Զախորդությունդ ընկերի ու բարեկամի պատճառած  
համարի՛ր,

Ընկի՛ր վոտի տակ ու ջարդվի՛ր, ու մի՛ վնառոիր  
դրան դարման, համբերի՛ր,  
թշվառության գիրկը ընկար, հաշտըլիր,  
ով անողնական, համբերի՛ր :

Թե եղ բանից շատ ձանձրանաս, նստիր տխուր,  
նստիր ու անհագ դու լա',  
Ուրիշ միջոց մի՛ վորոնիր, այդպես ահա, տանջվիր  
շարունակ, դու լա',  
Սադ աշխարհից ձեռք քաշի դու, համ աշկար լա',  
համ ել միայնակ դու լա',  
Թող կուրանա աչքդ, միտքդ, մի՛ մտածիր, մի՛ տես,  
աչքդ փակ դու լա',

Թքի՛ր քո նամուաի վրա, մի՛ քաշվիր դու,  
կրկին անզամ համբերիր,  
թշվառության գիրկը ընկար, հաշտըլիր,  
ով անողնական, համբերի՛ր :

Սակայն յէթե վորեն դժոխ ուղիս անել,  
մուսուլմանի պես դատիր;  
Հողատիրոջ մնչումը տար համբերությամբ,  
դու հայվանի պես դատիր,  
Վարիր, ցանիր, հաճիր բերքէ՝ բեկը տանի,  
խեղճ ինսանի պես դատիր,  
Մի՛ արթնանա, մի՛ հատկանա իրավունքը,  
ինզ անբանի պես դատիր:

Մի՛ դարդումիր, մի՛ նեղանա, ցավերդ տար  
լուռ ու անկամ, համբերիր,  
Թշվառության գերկը ընկար, հաշտըլիր,  
ով անոգնական, համբերիր:

Յեթե շատ, քիչ դեյրաթ սմեն, դու ամհավատ  
մարդկանց յերբեք մի՛ նայիր,  
Մի հեշտ գործով պատվելով, մի ուրանա քո հավատը  
յերկնային,  
Մանուկներիս համար հաց դուրս դա ասելով,  
դու տիրոջ տունը մի՛ քայքայիր,  
Մեղքը վիզու, գնա ֆահլայություն արա, իղուր տեղը  
մի՛ վայիր:

Գործատերը թե փող շոա, կրակում վառվիր  
հուր-հավիտյան, համբերիր,  
Թշվառության գերկը ընկար, հաշտըլիր,  
ով անոգնական, համբերիր:

կամ չանումդ յեթէ ուժ կա, զորսւթյուն կա յեթէ  
քո մեջ, քո սրտում,  
Զեռքէ զորեղ, յերեսդ վարդ, հոգիու դարդից զուրէ և  
բնավ ու խնդում,—  
Միանդամից վերջ առւր բոլոր քո ցավերին, քո  
գարդմարին անհասնում,  
Դառ ավաղակ, եղ ել մի մեծ արհեստ և հեշտ,  
առըբեր արվեստից իմաստուն,—

Ճըգմէր ու ա՛ռ, մորթի՛ր ու ա՛ռ, զարկի՛ր ու ա՛ռ,  
լծվիր արին, պարծեցի՛ր,  
Հենց վոր մի որ հասնես պատվի աստիճանին,  
իշխաններին, պարծեցի՛ր,

Հարի՛ր դու վոճրագործներին, պարծեցի՛ր,  
Խառնվի՛ր ամեն չար գործերի, պարծեցի՛ր,  
Մի՛ ունենա ել վոչ ամոթ, վոչ նամուս,  
Արուոդ տուր չուն ու գելի, պարծեցի՛ր:

Թարգմ. ԳՐԱՇԻ

# ԻՆՉԻԴ ԵՅԻՆ ՊԵՏՔ, ԱՍՏՎԱԾ...

Մեր աշխարհի ևս քարտսիրատ մարդուկները ինչիդ  
եյին պետք, աստվա՛ծ,  
Ասու տեսնեմ, մեզ մոտ ևս սառ արյունները ինչիդ  
եյին պետք, աստվա՛ծ:

Անամոթությունը արդեն ավելացավ, ժողովուրդը՝  
դարձավ հըու, հնազանդ,  
Ամեն զուզումի դիմացող հոգիները ինչիդ եյին պետք,  
աստվա՛ծ:

Այս ժամանակ, յերբ ել ազնվություն չկա, ու  
բարություն կամ եցող՝  
Յես չփխում արդարիակ ժամանակները ինչիդ եյին  
պետք, աստվա՛ծ:

Թէ խեղճերի արտասուքը մի որ ել ծով եր գառնալու  
անհատակ,  
ել ծովերը, ել են ովկիանոսները ինչիդ եյին պետք,  
աստվա՛ծ:

Թէ վոր կեղեքիչ վորսկանը՝ խիղճ, դթություն չեր  
ունենար բնավին,  
ել են սարի այծյամները, յեղնիկները ինչիդ եյին  
պետք, աստվա՛ծ:

Բաղի, ցանքով յեկամուտը թե վոր պիտի միշտ  
բեկեցը տեսնելին,  
Սերմը ցանող անխոնջ յերկրագործները ինչիոդ եյին  
պետք, աստված'ծ :

Աշխատանքը ուանչաղարինն եւ, ուժը յեղան, իսկ հողը  
քո տվածն եւ,  
Ել բեկզադաները, բեկ ու խաները ինչիոդ եյին պետք,  
աստված'ծ :

Թե վոր ամբողջ աշխարհումը տղիսուկթյունն ու  
խավարը պիտի իշխեր,  
Ել լուսավոր ու կրթված գիտնականները ինչիոդ եյին  
պետք, աստված'ծ :

Սյուրթուկավոր մուսուլմանին քյաֆուր անավամբ  
անվանակիցող, հայոյող,  
Դոցիմիսավոր,\*) հնամու մուսուլմանները ինչիոդ եյին  
պետք, աստված'ծ :

Կամ ել յեթե նրանք պիտի ունենային խոսք ու անուն  
ազգմեցիկ,  
Ել այս չորսհամարդ խմասուն, ուսումնականները  
ինչիոդ եյին պետք, աստված'ծ :

\*) Դոցիմիկ—թուրքական հին ձեւի հազուստ :

Թե զեցալթով պործի անցած պիտի այսօնն  
 գանոսքաղները<sup>\*)</sup> լինելին,  
 Ել թամբալ, խենթ քաջըերը, սատանաները ինչիդ  
 ելին պետք, աստված :

Թե վոր ամեն մի տղամարդ, աղջկա պես պիտի սիրել  
 աղջիք,  
 Ել աներում փակված կանալը, տիկինները ինչիդ  
 ելին պետք, աստված :

Թե մեր գորոր վաճառականները պիտի, Սոնյաներին  
 գտնելին,  
 Բա ել անքախառ ու թշլառ թուքյազբանները<sup>\*\*)</sup>)  
 ինչիդ ելին պետք, աստված :

Մեղա քեզ, տե՛ր, մեղա քեզ, տե՛ր, մեղա քեզ,  
 տե՛ր, մեղա աստված :
 Նայելով քո արարքներին զարմանում եմ՝ բերանս  
 բաց :

Թարգմ. ԳՐԱԴԻ

<sup>\*)</sup> Դանսսրանց—լրաետ :

<sup>\*\*) )</sup> Թուքյազբան—թուքք գեղջիսկ կնոջ անուն :

\* \* \*

- Գույցե քնա՞ծ ես, աղիզ բարեկամ :
- Ո, վո՛չ. Համեցե՞ք... հուզված ես դու խիստ...
- Տառներկու մանեթ փողի կարիք կա...
- Զե՛, խոր քնած եմ... թողեք ինձ հանդիսաւ :

Թարգմ. Թ. ՀՈՒՐՑԱՆ

---

# ԴԻԼԱՆԶԻ

Դե, ուստ ելի, հերիք վոռնաս շեմքում նստած, դի-  
ել մի կանչիր բարյլուչի պես, մի վնդստա, դիլանչի:

Թեև գիրի ել քելեխ ա ես պատվասեղանն—ո՞ւմ ինչ  
թերեւլ լիքն ա տեսամկ-տեսակ ուստեղանն—ո՞ւմ ինչ  
ու մեջլիսն ես թեև աղքատ մարդու տեղ ա—ո՞ւմ  
ինչ գործ.

Սակայն կա և աղաթ մի հին, աղա, խաստա  
դիլանչի,  
Դե, ուստ ելի, շեմքում նստած մի վնդստա, դիլանչի:

Մենք հարուստ ենք, մեր ապրուստը աշխարհում ո  
անգին ա,  
Մեր զոնաղն ել մեզ պես ուրախ, դովյաթատեր  
զանգին ա,  
Հաստավիզ ա, աղնվական, փորը մեծ ա, հանգին ա,  
Բեկ ու խան ա, մոլլա յա, տես, զառ խալաթն ել  
հաղին ա,  
Մեր կերածն ել թանկառին ա՝ համով զառն ու  
մաքին ա.

Եւ մի անձիք խոհանոցին աչքու, ապա, դիլանչի,  
Դե, ուաղ ելի, շեմքում նստած մի վնապստա, դիլանչի:

Մեզ ինչ թե քո ձեռքը եսոր գեռ չի լնկել մի քուռ  
Հաց,

Կամ թե սովոր ընտանիքը միշտ անում ա ախ ու  
լաց),

Մի տես, թե ինչ զզվելի ա քիթ-մոռւթդ մրուտած.

Թու քո ջանին, քո յերեսին եղ լպստած, դիլանչի,  
Դե, ուաղ ելի, շեմքում նստած մի վնապստա, դիլանչի:

Հարուստն, ախր, ինչի՞ պիտի, թողած մոլու ու  
խանի,

Կշտացնի աղքասոների ենքան սոված ընտանիք:  
Ինքը՝ տերը թող անսամբթ եղ քո գլխին ճար անի:

Բաց թող յախես, քո ճակատը ես ի՞նչ հաստ ա,  
դիլանչի,

Դե ուաղ ելի, շեմքում նստած մի վնապստա, դիլանչի:

Մի անզամից հասկացիր, վոր աղքատ ես դու բնածին  
Ենի մի տնկիլիր քո աչքը ծակ հարուստների

յեփածին,

Թե վոր չունես ուտելու բան - մեռիր՝ վերջ դիր քո  
լացին.

Մեզ մի տանջիր, ու մի յեղիր եղակես վստահ,  
դիլանչի,

Դե, ուաղ ելի, շեմքում նստած մի վնապստա, դիլանչի:

Դարսութիւն մոտ պատվական ժամկե աղքատը Հայր  
չի լինի,  
Աղքատն իրա որում իսկի խանի պես սար չի լինի,  
Կուշու յերբեք սովածին մոտ ու հավասար չի լինի,  
Թէ չե տեսար՝ ընկալ նրա փառքը հակա, դիւնչի,  
Դէ ուղ ելի, շեմքում նստած մի վնդուա, դիւնչի:

---

Թարգ. ՍԱՄՎԵԼ.

# Ա Խ...

Հեր դիմուի, ախ... քեֆ քաշելու այսմ եթ;  
Են ժամանակ, յերբ մեր հոտը գեռ խամ եր:

Ժողովուրդն իր իրավունքը չդիմեր,  
Ազատ մտքից հեռու յեր ու ազետ եր,  
Աչք չեր սրբում, թեև արցունքը գետ եր,  
Թերթ չեր կարդում; գերի յեր նա ու հետ եր,  
Լսածն ել ի՞նչ, սուսլիկ-սնոտի բան եր,  
Հեյ գիտի, ախ... քեֆ քաշելու այսմ եր:

Վոչ վոք յերկրում մեղ չեր թքում, պարսավում,  
Ինչ անեյինք, մաքուր եյինք յերեվում,  
Խալիսի աչքին սրբեր եյինք մենք թվում,  
Ինչ գեղեցիկ հուրմաթ-պատիվ կար մեզնում,  
Մեղ հարգողը, ինքը ամբողջ իոլամն եր,  
Հեյ գիտի, ախ... քեֆ քաշելու այսմ եր:

Յերբ ազգն ընկներ վշտի մեջը, մենք դու՛, բավական  
եյինք,  
Իշխանության, իշխաններին յեղբայր - ոգնական  
եյինք,  
Խալիսի աչքում դիբլա նյինք, սուրբ աղոթարան  
եյինք,  
Վորտեղ փլամ լիներ, ենտեղ սուփորի դլինին խան  
եյինք,

Դիշեր, ցերեկ մեղ համար տին, բայրամ եր,  
Հեյ դիտի, ախ... քեֆ քաշելու այամ եր:

Խոչքան ել վոր մեր զործերը կեղծ եյին,  
Թվում եյին, թե մաքուր, անեղծ եյին,  
Կազծում եյին մեր խոսքերն անկեղծ եյին,  
Դիտի համար որենք, որբաստեղծ եյին:  
Խալիսի գործն եր—պատվել, մեղ զովարանել,  
Հեյ դիտի, ախ... քեֆ քաշելու այամ եր:

Մեր կեղծիքը ծածկում եր արան—շորը,  
Խնչ գալիս եր, կոփում եմինք մեր փորը,  
Ով դիտեր, թե մի մեծ խարդախ ե մոլլան,  
Հիւլանդ մարդուն դեղ եր հողը մեր դռան:  
Մեր ապատարանն ուխտավայր, աղոթարան եր,  
Հեյ դիտի, ախ... քեֆ քաշելու այամ եր:

Խալիսը մեղ եր վասահում լուռ, հնագանդ,  
Մեզ եր կանչում «ծերունիներ սրբազն»,  
Զեր տարբերում մութը լույսից հարազատ,  
Մեր գրապանն եր լցնում դատածն իր դատ—զատ:  
Ով փող չտար՝ իրեն խայտառակ կաներ,  
Հեյ դիտի, ախ... քեֆ քաշելու այամ եր:

Հիմի ասես բոլոր մարդիկ քաջեր են,  
Քաջը ի՞նչ ե, սատանայի ճտեր են,  
Մեզ բոլորիս ձի յեն շինել, նստել են,  
Անցած այամ, ո՞ւր ե, հիմի լիներ են  
Աշխարհը շեն, յերբ մեր հոտը դեռ խամ եր,  
Հեյ դիտի, ախ... քեֆ քաշելու այամ եր:  
Թարգմ. ԳՐԱՇԻ

# Ե Յ Ա Մ Ի

Յես չեմ խարսի քո քարոզով — նահան ե նա, եյ  
ամի,

Թող ինձ պատժի քո հավատը, թե հայս ե նա, եյ  
ամի,

Միշտ յերդվելով քո իմանով՝ թալանում ես դու  
մարդկանց,

Ավագակի դենք ե՝ դինդ, մի վախենա, եյ ամի:

Զուր մի ներկիր քո մորուքը, մի դիր խինա քո  
մաղին,

Քո հոգու չափ սեզ չի դառնա, չի վորխմի նա, եյ  
ամի,

Թե վոր ոգուտ չունենայիր քո եղ որուշ-նամազից,  
Զեյիր տանի են թուքը, վոր քո զվիսին ա, եյ ամի:

Ի՞նչ ես դու միշտ աչքս խոթում եղ նամազը քո  
զազիր,

Դու քո տված ոգուտն ասա՝ ասեմ հախն ա, եյ ամի:

Թարգմ. ԱԱՄՎՆԼ

# ՄՈԼՎԱՅԻ ԴԱՐԴԸ

Ակն քաշելո՞՝ քեֆի-դելյանի համար ե,  
Արյուն լալո՞՝ ղաւֆի-ֆինջանի համար ե,

Քարող տալո՞՝ լոկ պարգևելիի, լոկ քերեխի,  
Խմ քիսայիի, խմ լիք զարանի համար ե:

Նպատառակո՞՝ կալին ցորեն հավաքելո՞՝ ե,  
Հիանալո՞՝ խմ, մալ, մառանի համար ե:

Ամեն մի որ քո միոտքերիդ տակ փուլելու,  
Լեզը սուփերիդ, լիքը ղազանի համար ե:

Յես հիվանդ նմ քյուֆթա, բողբաշի դարդեցը,  
Խորովելո՞՝ դոլմա, պատմջանի համար ե:

Գովքս՝ դժախտի անմահական աղբյուրների,  
Անուշ ջրի, շարբաթ, ոեհանի համար ե:

Տեսա դուք վիշագ եք յեփում, հասկացա վոր  
Բաղարիքն այդ քելեխ, նշանի համար ե:

Եերանի թե տեսնեյի քեզ, քաղցր ժառանգ,  
Ուշքս, միտքս քո դամճ, քարվանի համար ե:

Հարսւատներին հողի առւր, սկրտ, խեղճերին՝ քար,  
Քաղցր խուզս՝ սուլթան ու խանի համար ե,

Բարեկառվթյունն մեղ վլրա չի ազդի «Հոսպ-հով»,  
Կրակը լոկ այրալող քո ջանի համար ե:

Միշտ այրվի՛ր, ձեն մի հանի, դու քո աստվածը,  
Հասկացի՛ր, ձեն մի հանի, դու քո աստվածը,

Արդար խոսած, արդար դատած ել լինեա,  
Ուրացի՛ր, ձեն մի հանիր, դու քո աստվածը:

Թարգմ. ԳՐԱՇԻ

# ՍՏԱՄԱՆ ԶՈԲԱՆԸ

Մի չորան սարից ձեն տվեց . «Հարա՛յ ,  
Հա՛յ , հասե՛ք , գելը վոչխարը տարալ . . . »

Յելան դյուղացիք ջահել ու պառակ ,  
Վաղեցին—փայտ ու մահակներ առած :

Յեկ մարդիկ վռազ վաղեցին սարը ,  
Վոր փրկեն գելից դառն ու վոչխարը :

Վաղեցին խմբով ու սարը հասան ,  
Ու սարը հասան . . . հասան ի՞նչ տեսան :

Չորանը կանդնած խնդում և քահ-քա՛հ ,  
Վոր մարդիկ եսքան անխե՛լք են , ախմա՛խ :

Վոր եսքան մարդկանց նա կարաց խարել ,  
Յեկ եսքան մարդկանց կարճ խելքը չափել :

«Թեֆս յեկել եր , դարաֆաթ արի ,  
Վոնց բարի յեկաք , գնացե՛ք բարի» . . .

Ասաց չորանը , վոչխարը առալ ,  
Խնդալով քահ-քահ յետ սարը տարալ :

Եսպես անց կացան որեր մի քանի ,  
Բայց չմոռացան մարդիկ չորանի

Զար զարաֆաթը...յերբ մի ու նորից,  
Ելի չորանը ձեն տվեց սարից

«Ե՞յ, հարա՛յ, հասե՛ք, վոչխարը կերան,  
Դելերը...յեկա՛ն, ձե՛զ մատաղ, տարա՛ն...

Գեղացիք, հասե՛ք... ոգնություն...» սակայն  
Վո՛չ մի գյուղացի տնից դուրս չեկավ:

«Առ'ւտ և—ասացին—ով չի ճանաչում...  
Առ'ւտ և, չորանը սուտ տեղն և կանչում»:

Իսկ սարում՝ ճիշտ՝ վոր, գելեր մի քանի  
Վրա տվեցին հոտին չորանի,—

Վորին խեղղեցին և կերան վորին,  
Դետին փուցին անշունչ բոլորին:

Ենպես վոր հոտից մե՛կն ել չմնաց  
Ու գյուղին հասավ եսքան մեծ վնաս:

Յեվ ճիշտ և ատիած. «Չե՛ն ել համատում,  
Թէ տո՛մն ել վառավի սուտ ասող մարդու...»:

Թարգմ. Թ. ՀՈՒՐՑԱՆ

# ԳԱՐՆԱԿ, ՈՐԵՐ

Յեկեք կարնան վա՛ռ որեր,  
Տարվա սիրուն, զա՛ռ որեր:

Հարմիկ, ձյունը սարերի,  
Բացմիկ դույնը բաղերի:

Դետը առան սե՛լ լինի,  
Ու համիլը թել-թե՛լ լինի:

Բացվեն կանաչ ու ծաղիկ,  
Ծառ ու տերև ծիծաղեն:

Թարգմ. Թ. ՀՈՒՐՑԱԿ

# ԻՍՔԵՆԴԵՐՆ ՈՒ ԱՂՔԱՏԸ

Ձերմ արևի տամկ մով տիեզերքի՝  
Աղքատն եր նստել համբի յեղերքին.

Նստել եր մենակ ու ճանճերն են չար  
Տանջում եյին խեղճ մարդուն չարաչար :

Մեկ ել՝ են ճամբռվ իսքենդերն անցավ,  
Նայեց աղքատին, խղճաց ու ասավ. —

— Այ աղքատ, պատմիր, քեզ ի՞նչն ե հուզում  
Յեվ ի՞նչ ե հիմա քո սիրառ ուզում .

Յես դարման կանեմ քո ցալին անճար,  
Քո սեվ դարդերին կանեմ դեղ ու ճար:

— Փագիշահ, —ասաց աղքատը հանդիպտ, —  
Ճանճերի դեմ ե իմ դանզատը խիպտ,

Հրամայիր ե թող ճպնճերն ես անահ  
Զբլեն ու կորչեն, հոգիս դնջանա:

— Այ մարդ, ենպես բան ուզիր ինձանից,  
Վոր կախված լինի իմ հրամանից .

Յես ճանճերի դեմ անզոր եմ սաստիկ,  
Էսկ իմ զորությամբ նրանց չես սաստի:

— Փաղիշահ, թե վոր խեղճ ես ու անճար,  
Ել ինչո՞ւ ասիր, թե կանեմ քեզ ճար:

Դու վոր քեզ անհաղթ, քաջ ես համարում,  
Ասա, ճանճից թույլ ի՞նչ կա աշխարհում.

Թե վոր անդոր ես ճանճերից անդամ,  
Ել ինչո՞ւ քեզ մտա, ոգնության յես գամ:

— Այ վորդի, զնա, դու ասծուն դիմի,  
Նրանից խնդրիր ոգնություն հիմի,

Նա՛ կանի դարդին քո դարման ու դեղ,  
Ասծուն են դիմում թե թույլ, թե ուժեղ:

Թարգմ. ԱԱՄՎԵԼ

# Փ Ո ՂԱՅ

Մարդուն մարդու դեմք տվողը փողն ե միշտ,  
Անփող մարդու յերեսին սև քողն ե միշտ . . .

Թող վոչ ցեղդք լինի պահմ,  
Վոչ ել օիրառք պարզ ու ըստեւ:  
Անունող թող գրեն սեռի,  
Միայն թե՝ քեզ հարուստ ասեն:

Մարդուն մարդու դեմք տվողը փողն ե միշտ,  
Անփող մարդու յերեսին սև քողն ե միշտ . . .

Եեղիր անխելք ու անկարող,  
Բայց ունեցիր կարվածք ու հող,  
Հիմարները հողիու պիրա  
Ծունկի կղանձ միշտ դողեղող:

Մարդուն մարդու դեմք տվողը փողն ե միշտ,  
Անփող մարդու յերեսին սև քողն ե միշտ . . .

Գութ չինի թող քո հոգուամ,  
Մարդկանց արյուն ծծեա անքուն . . .  
Գրաբանումը թե փող ունեա,  
Ազնիմի մարդ եռ դու աշխարդում:

Մարդուն մարդու դեմք տվողը փողն ե միշտ,  
Անփող մարդու յերեսին սև քողն ե միշտ :

Թարգմ.՝ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

# ԻՆՉ ԳՐԵՄ

Բանաստեղծ եմ, իմ պաշտոնը ես և — վոտանավոր  
գրեմ,  
թե լավ, թե վատ, ինչ տեսնում եմ, յես հանդ ու  
վանկավոր գրեմ,  
Արեավը լույս, որն սպիտակ, գեշերը սեղավոր գրեմ,  
Վատը միշտ վատ, ծուռը միշտ ծուռ, շխտակը  
լուսավոր գրեմ։

Բաս ինչու յես, ով ընթերցող, աչքէ չոռոմ ու  
զայրանում,  
Զլինի՞ թե ես հայելում դեմքդ ծուռ և պատկերանում։

Տարված յերգով, իմ ցավերով, իմ հովերով, յես  
վերցնում եմ,  
Դնում եմ կողքիս թանաքս ու թղթերս և փորձում եմ  
Մի խոսք գրել—մեկ ել հանկարծ իմ ձեռքիցը դու  
բռնում ես,  
Յես դողում եմ, վորովհետեւ դամիս, լեզուս դու  
կտրում ես։

Դե լավ, յես հո ճշմարտության ճանապարհը չեմ  
ծոմուում,  
Դես իմ բոլոր տեսածներից չորսից մեկն ել յես չեմ  
գրում։

Դեռ շեմ՝ պրում չորսից մեկն ել, մի քո արաքըներիզ  
նայիր,

Հայությում և ինձ ամեն որ, զու մի քո բարքերիդ  
նայիր,

Մի խղճի յեկ, գաղափարիու, քո սարք ու կարգերիդ  
նայիր.

Զես ուզենաւ վոր յես գրիմ, քու արտօն-վարքերիդ  
նայիր:

Մարդ արարած, արատող տես, և իզուք մի սրգի ինձ  
չետ,

Այդ հարցում յեկ, սիրու մի նեղի և իզուք մի կոմի  
ինձ չետ:

Գրողները միշտ աւեսնում են նախատակը ձեր  
վերջնական,

Ինձնից նրանք շատ կարող են տալ ձեր հալը ճիշտ,  
իրական,

Բայց չեն դրում սրարքներիդ տառ և շորուց մեկը  
անգամ,

Դուք եք նրանց գրել տալիս վայրքը, բարքը ձեր  
անփառն:

Սակայն կացի աշխարհում այդ արատոններից զի՞րծ են  
նրանք,

Նման սուրբ դրածներից յարձր, անհամ քի՞րծ են  
նրանք:

Ինչպես վոր յես չորսից մեկը դրելու անզոր,  
անկար եմ,

Վարիենում և տառ և չորսից մեկն ել գրել գրող  
քանքարն են,

Թե խոռք կսառա ոմի վարիսնեա, քեզ չենք թողնի  
ել խանգարունց,  
Յես ել, ինչ կա, թե լավ, թե վաս, թե վոր շխտակ  
դժեմ, շարեմ,—

Են վախտը են հալլ կնկնես, վոր քո կյանքը դուզ  
կեռ կլի,  
Հոր չես գտնի գու հազնելու, և աստառը յերես կլի:

Թարգմ. ԳՐԱՇԻ

# ՄԻ ԹՈՂ, ՅԵԿԱՎ

Խանդոսատը, աման, մի թող, յեկավ,  
Վարմունքն ե յաման, մի թող, յեկավ:

Վայ, վայ, ասես թե իսկի մարդ չե սա,  
Անճռունի, անմիտ, ո՛, մի արջ ե սա,  
Աման, ինձ համար տղամարդ չե սա.

Վարազ ե թամամ, մի թող, յեկավ,  
Վարմունքն ե յաման, մի թող, յեկավ:

Նշանի որը ամոթից լացի,  
Զահել ե—ատելք—յես հավատացի,  
Բա, մարդս ե՞ս եր—հիմի իմացի.

Խանդոսատը, աման, մի թող, յեկավ,  
Վարմունքն ե յաման, մի թող, յեկավ:

Աման, վախեցա, պատուվեց լեզիս,  
Կծկվեց սիրտս ու կախվեց թելից,  
Թպրտաց հոգիս, դուրս յեկավ տեղից.

Այրվեցի, աման, մի թող, յեկավ,  
Վարմունքն ե յաման, մի թող, յեկավ:

Ճերմակ մազեքն են փայլում կղակին,  
Նայեք, մի սրա դժիկ թառակին,  
Ակս, շատ ե պառակ—պառակիս հասակին.

Մեռել և թամամ, մի թող յեկառվ,  
Վարդունքն է յաման, մի թող, յեկառվ:

Զըմամ եմ բերնից հոսող ջրիցը,  
Ես ինչ վաս հոտ և զայխ մրիցը,  
Ասելի յե ինձ խոսքն ու ղրիցը.

Մի ոճ և թամամ, մի թող, յեկառվ,  
Վարդունքն է յաման, մի թող, յեկառվ:

Թարգմ. ՍԱՄՎԵԼ

# ՀԵՅ ՓՈՂ

Եռէ իմ առքի լուսան ես, հեյ փող, դու ջամանա,  
 դու առօնս ես,  
 Արբությունս, նամառնաս ես, զեյրամթա ես,  
 արյունս ես,  
 Հարդանքս ես, պարծանքս ես, հաչանկս ես,  
 արնօնս ես,  
 Դուրանս ես, Մեղինանս ես, Մեկկանս, գիրլանս,  
 Հենարանս,  
 Կրօնս ես, Հավատս ես, դամանանքս, քամարանս:  
  
 Կյանքս անցում քեզ գիզելու հոգութի մեջ միշտ  
 ընկղմված,  
 Դարդուավեցի ու մնացի անկողնու մեջ հիմանդ  
 ընկած,  
 Արիաս Հետդ ե, թեկուդ յինեմ ես աշխարհից յան  
 վերացած,  
 Դու կյանքս ես, բերկրանքս ես, երությունս,  
 Հենարանս,  
 Կրօնս ես, Հավատս ես, դամանանքս, քամարանս:  
  
 Հեյ, այ զալում, հենց վոր ձամքիդ մի որ դարձա  
 յես ջանփիդա,  
 Զհազեցա ել քեզամից, քեզնից քաղցր ջան չպտտ,  
 Ժառանգներս հիմա խռնված, քեզ վոնց ավար, դիդ  
 շաղ կառան,

Ժառանդի՞նս ես, թե դու ի՞մս ես, իմ պրապանի մայ—  
ապրա՞նքս,  
Կրո՞նս ես, հավա՞տս ես, քավագա՞նս, դավանա՞նքս:  
Ժառանդներս, ինձ պես, քեզ չեն դասի յերբեք իմ  
սունդուկում,  
Ամեն մերը քեզ կմիանի հաղար մի տեղ, քեֆ—  
խնճույքում,  
Ռեսարաններ—կլուբներում, քեզ ցիր ու ցան՝ կտան  
քամուն.  
Ամեն համող քեզ կծառի, դու մի՞սս ես, թե  
արյո՞ւնս,  
Կրո՞նս ես, հավա՞տս ես, դավանա՞նքս, թե անո՞ւնս:  
Իմ սիրելի՛, այսուհետեւ քո վերջը—վախճանն է  
արդեն,  
Այսդիմով քո ցամի տեղը՝ իմ սիրտը, իմ ջանն է  
արդեն,  
Միտքս, հոգիս քեզ և դուրսան, քո բաղ ու բաղչան և  
Դու ինձ դյութող սիրուհի՞ս ես, նազելի՞ս ես,  
Հենարա՞նս,  
Կրո՞նս ես, հավա՞տս ես, դավանա՞նքս, քավագա՞նս:  
Քեզնից յես ձեռք չեյի քաշի, թե ուժ լիներ  
մաքառելու,  
Մահն ել կտա՝ հրաման կտա՝ ինձ քեզանից  
հեռանալու,  
Բայց իմ շոմչը փչելիս ել՝ յես ելի՛ յեմ բառառելու  
Դու իմ աշքիս լո՞ւյսն ես, հեյ փող, իմ հոգի՞ս ես,  
Հենարա՞նս,  
Կրո՞նս ես, հավա՞տս ես, դավանա՞նքս, քավագա՞նս:  
Թարգմ. ԳՐԱՅԻ

# ԹԱՎԾՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

42

Աղեքպեր Թահիր Զաղե Սարիր	Շամիլով	3
Աղեքպեր Թահիր զաղե Սարիրէ		
կենսագրությունը	Շամիլով	13
	Արտադի	

## ՍԱՐԻՐԻ ԲԱՆԱՏԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Բեյնելմիլել	Թարգմ. Վ. Աղասյան	31	
Քեզ ինսան ես իմանում	>	Մամվել	34
Բագմի Փահըաներին	>	Գրաշի.	37
Աքինչի	>	Մամվել	39
Համբերիր	>	Գրաշի	42
Ինչիդ եյին պետք, աստված	>	Գրաշի	46
* * *	>	Բ. Հուրյան	49
Դիլանչի	>	Մամվել	50
Ա'ին	>	Գրաշի	53
Ե'յ ամի	>	Մամվել	55
Մոլլայի դարդը	>	Գրաշի	56
Ստասան չորանը	>	Բ. Հուրյան	58
Գարնան որեր	>	Բ. Հուրյան	60
Իսքենդերն ու աղքատը	>	Մամվել	61
Փողը	>	Հ. Ամհյան	63
Ինչ գըմեմ	>	Գրաշի	64
Մի թող, յեկան	>	Մամվել	67
Ե'յ փող	>	Գրաշի	69



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԺԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045567

(214.)  
9482 30 ч.

19



---

Алекпер Таирзаде Сабир

---